

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ներածություն: Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի ռազմավարական պլանավորումը դարձել է կարևորագույն գործիք՝ հետխորհրդային անցումային փուլում համակարգի վերակառուցման, ֆինանսավորման բարեփոխման, կադրային «ծերացման» խնդրի լուծման և միջազգային ինտեգրման համար: Թեև 2011-2020 թվականներին մշակվել և իրականացվել են մի շարք ռազմավարական ծրագրեր, որոնք նպաստել են գիտական արտադրողականության աճին և երիտասարդ մասնագետների ներգրավմանը, այդուհանդերձ, առկա են ռազմավարական պլանավորման ցիկլի լուրջ ընդհատումներ (մասնավորապես 2015-2017թթ. և 2020 թվականից հետո ընկած ժամանակահատվածներում):

Հոդվածի նպատակն է բացահայտել Հայաստանում գիտության պետական ռազմավարության դերը և արդյունավետությունը՝ երկրի կայուն զարգացման գործում, իսկ խնդիրներն են՝ վերլուծել ՀՀ գիտական քաղաքականությունները և ռազմավարական ծրագրերը (2011-2020 թթ.), ինչպես նաև բացահայտել ռազմավարական պլանավորման համակարգային բացերը:

Գրականության ակնարկ: Ռազմավարության պատմական ուսումնասիրության առանցքում ընկած է մի հակասություն՝ ռազմավարության ընկալման՝ որպես գործնական կիրառման (իրական հակամարտությունների համատեքստում) և որպես տեսական հասկացության միջև: Տեսաբանները կարող են օգտվել գործնական փորձից, սակայն խնդիրն այն է, որ պատմական դերակատարները հաճախ իրենց ռազմավար չէին համարում, կամ այդ տերմինը նրանց համար այլ իմաստ ուներ, քան այսօր:

«Ռազմավարություն» տերմինը առաջին անգամ սկսել է օգտագործվել 1770-ականներին՝ ռազմական հարցերում: Սակայն միայն 20-րդ դարից այն ստացավ այն լայն կիրառությունը, որը տարածվել է տնտեսության, բիզնեսի, սպորտի և այլ ոլորտների վրա: Այդ ընդլայնման պատճառով այսօր անհրաժեշտ է խոսել «ռազմական ռազմավարության» մասին՝ այն տարբերակելու համար ընդհանուր մարդկային գործունեության ռազմավարությունից¹:

Մի շարք հետազոտությունների շրջանակում ռազմավարության քննարկման մեկնակետը հիմնվում է Սուն Ցզիի դասական աշխատության վրա արված հղումներով: Նրա մոտեցմամբ՝ ռազմավարության առանցքային տարրերը հանդիսանում են այն գործողությունները, որոնք ձևավորվում են

¹ Freedman, L. (2017). The meaning of strategy. Texas National Security Review, : Volume 1, Issue 1 (December 2017, p 90, <https://repositories.lib.utexas.edu/items/bd5fa240-f8ef-4749-903d-b8b42dbba112>

կանխատեսելի և վերլուծված տեղեկատվության հիման վրա, իսկ ռազմավարությունը վերաբերում է կազմակերպության նշանակալի ջանքերին՝ գոյատևելու, ընդլայնվելու և մրցակիցներին հաղթելու համար: «Ռազմավարություն» բառը ծագում է հին հունարեն «στρατηγός» բառից, որը նշանակում է ռազմական հրամանատար, հետագայում՝ հրամանատարների կողմից իրենց գործերի դասավորության համար ձեռնարկված քայլեր: Այսօր այս հասկացությունն առավելապես վերլուծվում է բիզնեսի տեսանկյունից²:

Սուն-Ցզին, Եգեկիան, Կեսարը, Նապոլեոնը՝ նրանք բոլորը եկել են մի ընդհանուր եզրահանգման. մեծ ռազմավարական գաղափարները բանականներից շատ ավելի զորեղ են և մարտադաշտում ձեռք բերված հաղթանակներից անհամեմատ ավելի կործանարար: Ազգային ռազմավարությունների բնորոշ սխալը ձեռնարկությունների ռազմավարությունների անտեսումն է, և հակառակը՝ ձեռնարկությունների ռազմավարությունները հաճախ ուղղված չեն երկրի ռազմավարության իրացմանը³:

Այսպիսով, ռազմավարությունը սկզբնապես նշանակել է զուտ ռազմական պլանավորում, և ոչ թե ժամանակակից, ընդլայնված ընկալումը, որի համաձայն այն ներառում է բոլոր հնարավոր միջոցների (ռազմական, քաղաքական, տնտեսական) կիրառումը՝ երկարաժամկետ նպատակների իրագործման համար: Այդ ընդլայնված իմաստը ձևավորվել է միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ հնացած՝ նեղ ռազմավարական ըմբռնման սահմանափակումները դարձան ակնհայտ⁴:

Ռազմավարության հասկացությունը պետք է դիտարկել որպես պրակտիկա, որն ունի հատուկ առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ դրա իրականացումը նշանակալի անորոշության պայմաններում և շարունակական հարմարվելու անհրաժեշտությունը: Բացի այդ, ռազմավարությունները միայն կետային որոշումներ չեն, այլ գործընթացներ, որոնք ներառում են պլանավորում, հարմարեցումներ և արձագանքներ միջավայրի փոփոխություններին⁵: Ռազմավարությունը սերտ կապվում է կառավարման գործունեությանը, քանզի

² “Ovidius” University Annals, Economic Sciences Series Volume XXI, Issue 2 /2021, Andra Modreanu, Gabriela Nicoleta Andrisan, Maria-Alexandra Sarbu, Strategy: An Overview, էջ 836-841, <https://stec.univ-ovidius.ro/html/anale/RO/2021-2/Section%204/37.pdf>

³ Կվինտ, Վ. Լ. (2023). Դեպի ռազմավարության տեսության ակունքները. Գեներալ Ժոմինիի տեսական աշխատանքի հրատարակման 200-ամյակը (թարգմ.՝ Ս. Պ. Հակոբյան). Սանկտ Պետերբուրգ 2023, էջ 40, https://mse.msu.ru/wp-content/uploads/2023/10/%D0%96%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BD%D0%B8_%D0%B1%D0%BB%D0%BE%D0%BA_%D0%B0%D1%80%D0%BC..pdf

⁴ Texas National Security Review: Volume 1, Issue 1 (December 2017) Print: ISSN 2576-1021 Online: ISSN 2576-1153, Sir Lawrence Freedman, The Meaning Of Strategy, p.100, <https://repositories.lib.utexas.edu/items/bd5fa240-f8ef-4749-903d-b8b42dbba112>

⁵ Nova Economia v.31 n.2 2021 , Strategy: notes for an economic and historical approach, Enéas Gonçalves de Carvalho ebastião Neto Ribeiro Guedes Rogério Gomes , pp511-536 <https://doi.org/10.1590/0103-6351/6044>

երկրին ուղղորդում է իր ռազմավարական նպատակին: Այն, որպես կառավարման բարձրագույն մակարդակ, կարող է փոխհաստոցել ռեսուրսների կամ այլ կարիքների պակասը, քանզի ավելի օպտիմալ ձևով է բաշխում ունեցած հնարավորությունները: Պետական ռազմավարությանն են վերաբերում պետության նպատակները, նրա գործունեության հիմնական տեսակները, «գլխավոր հարվածի» ուղղությունը, կողմնակիցների և հակառակորդների որոշումները, սեփական առավելությունները և դրանց օգտագործման ուղղությունները, գործունեության սկզբունքների համալիրը, հարաբերությունները արտաքին և ներքին միջավայրերի հետ⁶:

Գիտության դերը տնտեսության համատեքստում երբեք չի թերագնահատվել, և տնտեսագետները վաղուց են գիտակցել, որ գիտությունը հանդիսանում է առաջընթացի անբաժանելի բաղադրիչ: Ընդհուպ 1970-ականներից սկսած գիտական հոդվածներում գիտությունը արդեն կապվում էր տնտեսական աճի հետ: Հերբերտ Բնիսթեյնի 1977 թ. հրապարակված հոդվածում քննարկվում է Դենիսոնի բարձրացրած հարցը, թե ինչպես են տարբեր գործոններ ազդում աճի վրա, որում վերջինս ուշադրություն էր դարձրել «գիտելիքի առաջընթացին»: Նա գիտությունը դիտարկում է որպես մնացորդային գործոն՝ այն, ինչ մնում է բոլոր մյուս պատճառները հաշվի առնելուց հետո⁷:

Պետական աջակցությունը գիտության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ունի առանցքային նշանակություն: Հանրային ներդրումները ստեղծում են նախադրյալներ նորարարության խթանման, գիտական ենթակառուցվածքների ամրապնդման և պետության ռազմավարական նպատակների իրականացման համար: Պետական մոտեցումը հատկապես կարևոր է գիտական համակարգի կայունության, գիտնականների մասնագիտական աճի և երկարաժամկետ գիտահետազոտական ծրագրերի իրականացման տեսանկյունից⁸: Պետական աջակցության կարևորությունը գիտական հետազոտություններին և զարգացման գործունեությանը կայանում է նաև նրանում, որ շուկան ոչ միշտ է ապահովում բավարար ներդրումներ որոշ տեսակ հետազոտությունների համար՝ հատկապես այն դեպքերում, երբ սոցիալական եկամուտները գերազանցում են մասնավոր շահերը: Հետազոտությունների և զարգացման ոլորտում պետության դերը արտացոլվում է դրամաշնորհների տրամադրման, հարկային խթանների և այլ քաղաքական

⁶ ՀՀ ԳԱԱ հրատ., Կանթեդ. Գիտական հոդվածների ժողովածու, 2009, 21, Թամարա Գևորգյան, Ռազմավարության դերը պետական կառավարման մեջ, էջ166, <https://arar.sci.am/dlibra/publication/183063/edition/166290/content?ref=struct>

⁷ Inhaber, H. (1977). Scientists and Economic Growth. Social Studies of Science, 7(4), 517–524. doi:10.1177/030631277700700415

⁸ Vilchis Flores, J. C., & Merritt Tapia, H. (2024). El papel del Estado en el desarrollo científico y tecnológico de México. Problemas del Desarrollo. Revista Latinoamericana de Economía, 55 (219), 85–112. <https://doi.org/10.22201/iiiec.20078951e.2024.219.70211>

գործիքների միջոցով, ինչը նպաստում է նորարարության խթանմանը և գիտական ենթակառուցվածքների զարգացմանը⁹:

Գիտությունը հանդիսանում է ժամանակակից տնտեսության հիմնասյուներից մեկը: Տնտեսական աճի և մրցունակության ապահովման համար անհրաժեշտ է ոչ միայն նյութական ռեսուրսների, այլև գիտելիքի ու նորարարական կարողությունների արդյունավետ օգտագործում: Գիտական հետազոտությունները հնարավորություն են տալիս հայտնաբերել նոր տեխնոլոգիաներ, բարելավել արտադրական գործընթացները, բարձրացնել աշխատանքային արդյունավետությունը և ընդլայնել շուկաները:

Մեթոդաբանություն: Հետազոտությունն իրականացվել է որակական վերլուծության մոտեցմամբ: Կատարվել է գրականության քննադատական ակնարկ, այսինքն իրականացվել է «ռազմավարություն», «գիտական քաղաքականություն» և «պետական ծրագրեր» բանալի բառերով գիտական և տեսական աղբյուրների համակարգված ուսումնասիրություն: Այս մեթոդը ծառայել է ռազմավարության հայեցակարգային հիմքերը, նրա պատմական զարգացումը և ժամանակակից ընկալումները պարզաբանելու համար: Հետազոտության հիմնական մասը կազմել է Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացմանն ուղղված առանցքային պետական փաստաթղթերի՝ ռազմավարությունների, ռազմավարական ծրագրերի և կառավարության որոշումների խորքային ուսումնասիրությունը: Բովանդակային վերլուծության միջոցով բացահայտվել են գիտական քաղաքականության հիմնական ուղղությունները, թիրախային ցուցանիշները և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների դինամիկան: Իրականացվել է Ռուսաստանի, Չինաստանի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի գիտության ռազմավարական առաջնահերթությունների, ինչպես նաև ՀՀ գիտության զարգացման 2011-2015 և 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրերի նպատակների և թիրախների համադրումներ:

Վերլուծություն: Պետական ռազմավարությունը գիտության զարգացման համար համարվում է առանցքային գործոն՝ ազգային մրցունակության, տնտեսական աճի, տեխնոլոգիական ինքնիշխանության և սոցիալական բարեկեցության ապահովման գործում: Պետության կողմից մշակված և իրականացվող գիտական ռազմավարությունը նպաստում է գիտական ներուժի զարգացմանը, նորարարությունների խթանմանը և գիտության ու արդյունաբերության համագործակցության ամրապնդմանը:

Տարբեր պետություններում գիտության և տեխնոլոգիայի զարգացման պետական ռազմավարությունները տարբերվում են իրենց հիմնական ուղղություններով և ակնկալվող արդյունքներով, սակայն բոլոր դեպքերում դիտվում են որպես տնտեսական և տեխնոլոգիական մրցունակության

⁹ Bernanke, Ben S. “Promoting Research and Development: the Government’s Role.” Issues in Science and Technology 27, no. 4 (Summer 2011). <https://issues.org/bernanke-research-development-government/>

բարձրացման առանցքային գործիք: Տարբեր պետություններում գիտության և տեխնոլոգիայի զարգացման պետական ռազմավարությունների համեմատական վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Ընդհանուր առմամբ, այս երկրների և տարածաշրջանների փորձը ցույց է տալիս, որ գիտության պետական ռազմավարությունը կարևոր նախապայման է ազգային տնտեսական և տեխնոլոգիական հաջողությունների համար:

Աղյուսակ 1

Պետական ռազմավարության հիմնական ուղղությունները և ազդեցությունները տարբեր երկրներում

Երկիր/ Տարածաշրջան	Ռազմավարության հիմնական ուղղություններ	Արդյունքներ
Ռուսաստան ¹⁰	Տեխնոլոգիական ինքնիշխանություն, ֆինանսավորում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ	Տնտեսական աճ, նորարարական նախագծեր
Չինաստան ¹¹	Ինտելեկտուալ սեփականության պաշտպանություն, շարժունակություն, պետական գնումներ	Արագ գիտական առաջընթաց, տեխնոլոգիական առաջատարություն
ԵՄ ¹² /ԱՄՆ ¹³	Հետազոտությունների ֆինանսավորում, պետություն- մասնավոր հատված հարաբերակցություն, հարկային արտոնություններ	Նորարարական էկոհամակարգ, արդյունաբերության զարգացում

Խորհրդային Միության փլուզումից հետո Խորհրդային Միության երկրների հետ գիտական կապերը խզվեցին, իսկ օտարերկրյա պետությունների

¹⁰ Lenchuk, E. (2022). Science and technology development as a strategic national priority of Russia. Economic Revival of Russia. <https://doi.org/10.37930/1990-9780-2022-1-71-58-65>

¹¹ Wagner, C. (2024). Science and the nation-state: What China's experience reveals about the role of policy in science. Science and Public Policy. <https://doi.org/10.1093/scipol/scae034>

¹² Panikar, G., & Morozov, V. (2025). THE ROLE OF STATE ECONOMIC POLICY IN THE IMPLEMENTATION OF NEW TECHNOLOGIES AND INNOVATIONS: THE CASE OF PUBLIC-PRIVATE PARTNERSHIPS IN EU COUNTRIES. Actual Problems of International Relations. <https://doi.org/10.17721/apmv.2025.162.1.83-100>,

¹³ Likhota, O. (2025). Evolution Of State Regulation Of Innovation In The USA. Intellect XXI. <https://doi.org/10.32782/2415-8801/2025-2.1>,

հետ դրանք լիովին բացակայում էին, ինչը պահանջեց համեմատաբար երկար հարմարողական փուլ՝ նոր իրողություններին ընտելանալու համար: Հայաստանը գիտական կիզակետը Խորհրդային Միության պահանջներին ծառայելուց տեղափոխեց բացառապես պետության կարիքների բավարարմանը: Հայաստանը զգալի փոփոխություններ կրեց գիտական քաղաքականության ոլորտում, ներառյալ կառուցվածքային և կադրային բարեփոխումներ: Այս անցումը կարևոր էր երկրի համար՝ գիտական համագործակցության փոփոխությունները տարածաշրջանայինից միջազգայինի վերափոխելու և հաղթահարելու համար:

1991-2008 թթ. Հայաստանի գիտական համակարգը բախվել է կադրային լուրջ մարտահրավերների: Երկու անգամ նվազել է պետական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների թիվը, երիտասարդ մասնագետների ներգրավման համար բացակայել է պետական նպատակային քաղաքականություն, և շարունակվել է ոլորտի «ծերացումը»: Գիտական կադրերի պատրաստումը տարերային բնույթ է կրել՝ զուրկ լինելով պահանջարկ-առաջարկի հաշվառումից: Հասարակական գիտակցության մակարդակում նկատվել է գիտության հեղինակության անկում, ինչն էլ նվազեցրել է գիտաշխատողի մասնագիտական կարիերայի գրավչությունը¹⁴:

Անկախությունից հետո գիտական համայնքի կողմից բարձրացված մարտահրավերներին արձագանքելու համար Հայաստանի կառավարությունը նախաձեռնեց մի շարք միջոցառումներ, ներառյալ մրցութային հետազոտական դրամաշնորհների հայտարարություններ՝ առավել հեռանկարային նախագծերին աջակցելու համար: Մրցույթները, որոնք կազմակերպվում էին Ֆինանսների և Էկոնոմիկայի, իսկ ավելի ուշ՝ Կրթության և գիտության նախարարությունների կողմից, անմիջապես ճանաչվեցին որպես գիտական հետազոտությունների ֆինանսավորման առավել խոստումնալից ձևաչափերից մեկը, սակայն սկզբնապես սահմանափակ էին ծավալով: Ոլորտում հիմնական բարեփոխումները սկսվեցին 2007 թվականին՝ Կրթության և գիտության նախարարության ներքո Գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) հիմնադրումամբ, որը նպատակ ուներ իրականացնել գիտության ոլորտի միասնական կառավարում և բարելավել գիտության ու տեխնոլոգիայի ոլորտում քաղաքականության մշակումն ու համակարգումը: Մինչև 2009 թվականը ԳՊԿ-ն ընդունել էր ֆինանսական քաղաքականության երեք հիմնական ուղղություններ՝ հիմնարար, թեմատիկ (պայմանագրային) և նպատակային: Այդ ժամանակից ի վեր ԳՊԿ-ն նախաձեռնել, իրականացրել և հաստատել է բազմաթիվ հետազոտական ծրագրեր, ներառյալ տեղական և միջազգային: Հայաստանում դրամաշնորհային ֆինանսավորման հիմնական գործակալությունը ներկայումս Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (ԲԿԳԿ) է, որը ներառել է

¹⁴ ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27 -ի նիստի N 20 արձանագրային որոշման հավելված, էջ 2-9, <http://old.hesc.am/files/10-razmavarutyun-27.05-33e4807a1e29afcf67b35e54b0c54caf.pdf>

նախկին ԳՊԿ-ն: Կարելի է ասել, որ Հայաստանը այն երկրներից է, որտեղ գերակշռող մեկ ֆինանսավորող գործակալություն կա, ինչպես Չինաստանը, Գերմանիան և Իսպանիան: Սա նրանց առանձնացնում է այն երկրներից, որոնք ունեն երկու (ԱՄՆ, Ճապոնիա, Կանադա, Ավստրալիա) կամ ավելի (Ֆրանսիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա) գործակալություններ:¹⁵

Ի պատասխան ոլորտում ձևավորված ճգնաժամային իրավիճակին՝ ՀՀ կառավարությունը 2010 թ. մայիսի 27-ին հաստատեց «Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման ռազմավարությունը 2011–2020 թթ.»։ Փաստաթուղթը սահմանում է գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ հիմք ծառայելով 2011–2015 և 2016–2020 թվականների ռազմավարական ծրագրերի մշակման համար: Այն ամփոփում է ոլորտի ներկա վիճակը, բացահայտում է հիմնական խնդիրներն ու առաջադրում է զարգացման նպատակներ: Ռազմավարության իրականացումն նախատեսված է բազմաբաղադրիչ համագործակցության միջոցով՝ ներառելով պետական կառույցներ, մասնավոր հատված, քաղաքացիական հասարակության ինստիտուտներ և սփյուռք¹⁶:

2011 թ. հունիսի 17-ին ՀՀ կառավարության նիստի թիվ 23 որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որը սահմանում է ոլորտի զարգացման թիրախային նպատակները, դրանց իրականացման միջոցառումները և գնահատման չափորոշիչները: Ծրագիրը մշակվել էր Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության» հիմնադրույթներին համապատասխան: Ծրագրի իրականացումը միտված է այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ գիտության և բարձր տեխնոլոգիաների համակարգը կզարգանա արդյունավետ կառավարման, համակարգված կազմակերպման և կայուն գործարկման հիման վրա: Առաջնահերթ է համարվում նաև ոլորտում ներգրավված երիտասարդ մասնագետների թվի ավելացումը, հետազոտական ենթակառուցվածքների արդիականացումը և նյութատեխնիկական ռեսուրսների համահունչ զարգացումը: Կարևոր ուղղություններից է հիմնարար ու կիրառական

¹⁵ Kesoyan G., Shushanyan R., Ohanyan M., Shahkhatuni A., Yeghikyan M., Blaginin V., Boosting science through state support: Armenian state grants as a driver of scientific and international advancement, Journal of Informetrics, Volume 19, Issue 3, 2025, 101704, ISSN 1751-1577, <https://doi.org/10.1016/j.joi.2025.101704>

¹⁶ ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27 -ի նիստի N 20 արձանագրային որոշման հավելված <http://old.hesc.am/files/10-razmavarutyun-27.05-33e4807a1e29afcf67b35e54b0c54caf.pdf>

հետազոտությունների խթանումը, հատկապես այնպիսի ուսումնասիրությունների, որոնք կարող են ուղիղ ներդրում ունենալ տնտեսության մեջ նոր գիտելիքի և տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Խիստ կարևոր է նաև կրթության, գիտության, տեխնոլոգիաների ու նորարարության միջև փոխկապակցվող և երկարաժամկետ համագործակցություն ապահովող համակարգի ձևավորումը: Առանձին ուշադրություն է դարձվում հայազիտության զարգացմանը՝ որպես ազգային գիտության առաջնային ուղղություն: Բացի այդ, կարևոր է միջազգային գիտական և գիտատեխնիկական կապերի ընդլայնումը, որը հնարավորություն կտա համաշխարհային գիտական գործընթացներին լիարժեք մասնակցություն ապահովելու համար: Պետական քաղաքականության սկզբունքները հիմնված էին «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և 2010 թ. «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության» վրա: 2010 թ. պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերն իրականացվել են 115 գիտական կազմակերպություններում և ԲՈՒՀ-երում: Սակայն 2008–2010 թթ. ոլորտին ուղղված ֆինանսավորումը կազմել է ՀՆԱ-ի ընդամենը 0.19–0.27%՝ էականորեն զիջելով համեմատելի երկրների ցուցանիշներին¹⁷: 2000–2009 թթ. գիտական աստիճան է շնորհվել 4567 անձի (452 դոկտոր, 4075 թեկնածու), սակայն նրանցից միայն 27.3%-ն է ներգրավված եղել պետական ծրագրերում՝ ընդգծելով գիտական ներուժի թերի օգտագործման խնդիրը¹⁸:

2009 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի պետական ֆինանսավորումը կազմել է 8.37 մլրդ դրամ՝ 2001 թվականի համեմատ ավելի քան երեք անգամ աճելով¹⁹: 2008–2009 թթ. միջազգային դրամաշնորհներով իրականացվել է տարեկան 20 հազար ԱՄՆ դոլարը գերազանցող ավելի քան հիսուն ծրագիր՝ մոտ 7 մլն դոլար ընդհանուր ֆինանսավորմամբ: 2010 թ. կեսերին պետական ծրագրերում ներգրավված է եղել 3127 գիտական աստիճան ունեցող մասնագետ, որոնցից 720-ը՝ դոկտոր, 2407-ը՝ թեկնածու: Գիտական տեղեկատվության արդյունավետ կառավարման համար ստեղծվել է Հայկական ազգային GRID միջավայրը, իրականացվել են ենթակառուցվածքային ծրագրեր, ինչպես նաև ապահովվել է լիցենզավորված մատչելիություն «Springer Science and Media BV» հարթակի միջոցով: 2011 թ. դրությամբ գործել է 68 գիտական պարբերական, որոնցից չորսը ներառված էին «Journal Citation Reports»-ում, և դրանցից երկուսն ունեցել են ազդեցության գործակից: Նույն թվականին իրականացվել է 158 ենթակառուցվածքային ծրագիր, 3 ծրագիր՝ մշակութային արժեքների պահպանման ուղղությամբ, ինչպես նաև 710

¹⁷ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման Հավելված N 1 <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf>

¹⁸ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման Հավելված N 1 <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf>

¹⁹ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման Հավելված N 1 <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf>

թեմա՝ պայմանագրային ֆինանսավորմամբ: 2008–2010 թթ. աճել է գիտական հրապարակումների քանակը. 2009-ին տպագրվել է շուրջ 3900 աշխատանք, իսկ «Scopus» շտեմարանում գրանցվել է 1615 հոդված: Կիրառական հետազոտությունները կազմել են պետական ֆինանսավորման մոտ 15 տոկոսը: Մտավոր սեփականության ոլորտում 2010 թ. ազգային հայտատուներին տրամադրվել է 166 արտոնագիր, իսկ միջազգային մակարդակով՝ 9 արտոնագիր: «Scopus»-ում գրանցված աշխատանքների մեծ մասը վերաբերում է ֆիզիկային, աստղագիտությանը, կենսաբանությանը և քիմիային (մոտ 64 %):²⁰

ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27-ի N 640-Ն որոշմամբ սահմանվել են Հայաստանի գիտության և տեխնիկայի զարգացման 2011–2014 թվականների գերակայությունները, որոնց շրջանակում առանձնացվել են՝ 1) հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ, 2) գիտություններ կյանքի մասին, 3) վերականգնողական էներգետիկա և էներգիայի նոր աղբյուրներ, 4) առաջատար տեխնոլոգիաներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ, 5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի գիտություններ և խնայողական բնօգտագործում, և 6) կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ: 2010 թ. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել են գիտության զարգացման գերակայությունները, որոնք ներառում են հայագիտությունը, կենսաբժշկական և տեղեկատվական տեխնոլոգիաները, վերականգնվող էներգետիկան և հիմնարար գիտությունները: Նույն տարվա ընթացքում իրականացվել է 158 ծրագիր, որոնցից 50-ը իրականացվել է ակադեմիական հաստատությունների և բուհերի համագործակցությամբ: Հայագիտության ոլորտում 2008–2010 թթ. իրականացվել է 108 ծրագիր, ինչի արդյունքում հրատարակվել է 1 022 աշխատություն, իսկ հումանիտար գիտությունների շրջանակում՝ 1 105 հոդված, հիմնականում հայերեն: Այդ շրջանում Հայաստանում գիտության ոլորտում խորացել է միջազգային համագործակցությունը. կնքվել են համաձայնագրեր մի շարք առաջատար հաստատությունների հետ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության Հիմնարար հետազոտությունների հիմնադրամի, Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ: Արդյունքում զգալիորեն աճել է համահեղինակությամբ գիտական հրապարակումների քանակը. «Scopus»-ի տվյալներով, եթե 2000 թ. դրանք կազմել են հրապարակումների 41 %-ը, ապա 2010 թ.՝ մոտ 51 %-ը, ինչը վկայում է հայկական գիտնականների աճող ներգրավվածության մասին միջազգային գիտական գործընթացներում²¹:

²⁰ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման Հավելված N 1 <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf>

²¹ ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման Հավելված N 1 <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf>

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագիր, որը գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում գերազանցության խթանման և միջազգային ասպարեզում, առաջին հերթին՝ Եվրոպական հետազոտական տարածքում մրցունակ ազգային գիտահետազոտական համակարգ ստեղծելուն ուղղված միջոցառումների ու դրանց արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների ամբողջություն է: Ծրագրի համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունով» ամրագրված նպատակադրումներն ու դրանց ձեռքբերման մարտավարությունները, 2011 թվականի մայիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» արդյունքները և 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» հիմնադրությունները: Տվյալ ծրագրի տեսլականն էր 2020 թվականին Հայաստանի գիտության ոլորտը դառնալու է միջազգայնորեն մրցունակ, Եվրասիական տնտեսական տարածքի հետ ինտեգրված ազգային գիտական համակարգ, որն ուժեղացնում է հիմնարար և կիրառական հետազոտությունների գերազանցությունը և նպաստում է երկրի տնտեսական մրցունակության, անվտանգության և սոցիալական-մշակութային զարգացման բարձրացմանը: Ծրագրի հիմնական նպատակներն էին գիտության և տեխնոլոգիաների կառավարման համակարգի կատարելագործումը, գիտական կադրերի վերաբրտադրության արդյունավետ մեխանիզմների ներդրումը և գիտության ենթակառուցվածքների արդիականացումը: Նպատակ էր դրվում նաև խթանել հիմնարար և կիրառական հետազոտությունները՝ հատկապես տնտեսության համար կարևոր գիտելիքների ստեղծման ուղղությամբ: Մեկ այլ կարևոր ուղղություն էր կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի համակցված համակարգի ձևավորումը, ինչպես նաև հայագիտության առաջնահերթ զարգացումը: Վերջապես, ծրագիրը նպատակ ուներ ընդլայնել միջազգային գիտական համագործակցությունը և ապահովել խելացի մասնագիտացման ընթացքը Եվրոպական հետազոտական տարածքում²²:

Եթե համեմատենք Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 և 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրերի նպատակները (աղյուսակ 2), ապա կնկատենք, որ էական թիրախային

²² ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշման Հավելված N 1, <http://old.hesc.am/files/git-razmavarutyun-2017-20-17.08.17pdf.pdf>

փոփոխություններ չկան, սակայն առկա են փոփոխություններ շարադրանքի և մոտեցումների մեջ:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 և 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրերի նպատակների համեմատականներ ²³

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական`	Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական`
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ	ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
Ծրագրի նպատակը ՀՀ գիտության ոլորտի հետագա զարգացման ապահովումն է` ՀՀ կառավարության, մասնավոր թիզների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:	Ծրագրի տեսլականը` 2020 թվականին Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտը միջազգայնորեն մրցունակ, ԵՀՏ հետ ինտեգրված ազգային գիտական համակարգ է, որը խթանում է գերազանցությունը հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններում և նպաստում հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացմանը, անվտանգության ապահովմանը և սոցիալական ու մշակութային առաջընթաց զարգացմանը:
Ծրագրի իրականացման հիմնական թիրախներն են`	Ծրագրի նպատակներն են`
1) գիտության և <u>առաջատար</u> տեխնոլոգիաների ոլորտի կառավարման ու <u>աշխատանքների կազմակերպման</u> համակարգի կատարելագործումը, <u>ոլորտի կայուն զարգացման</u> պայմանների <u>ստեղծումը</u> :	1) գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի կատարելագործում:

²³ աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, հիմք ընդունելով` ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման Հավելված N 1 <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf> և ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշման Հավելված N 1, <http://old.hesc.am/files/git-razmavarutyun-2017-20-17.08.17pdf.pdf> տվյալները

2) <u>գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի աճի ապահովումը, գիտության ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացումը.</u>	2) <u>գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրում, գիտության ենթակառուցվածքների արդիականացում. ձեռքբերման ապահովում:</u>
3) <u>հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանումը.</u>	3) <u>հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող և (կամ) երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում.</u>
4) <u>կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը.</u>	4) <u>կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում.</u>
5) <u>հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը.</u>	5) <u>հայագիտության ոլորտի առաջնային զարգացում.</u>
6) <u>միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացումը:</u>	6) <u>միջազգային գիտական համագործակցության զարգացում, ԵՀՏ-ում խելացի մասնագիտացման տիրույթի</u>

* տարբերությունները ընդգծված են

2011–2015 թվականներին Հայաստանի գիտության ոլորտի պետական ֆինանսավորումը աճել էր 9 433 092,7 հազար ՀՀ դրամից մինչև 13 922 121,3 հազար ՀՀ դրամ, կազմելով համախառն ներքին արտադրանքի 0,25–0,28 %-ը , ֆինանսավորման միջին բաժանումը կազմում էր՝ 72 % բազային ծրագրերի, 13 % պետական նպատակային ծրագրերի, 10 % դրամաշնորհային ծրագրերի և 5 % պետական բյուջեի հաշվին գիտական աստիճան ունեցող աշխատողներին հավելավճար տրամադրելու նպատակով իրականացվող ծրագրերի համար²⁴: 2011–2015 թթ. ոլորտի աշխատողների թիվը նվազել է 5 718-ից մինչև 5 044, որոնց շուրջ 75 %-ը հետազոտողներ են, մինչդեռ մինչև 40 տարեկանների մասնաբաժինը աճել է 18,4 %-ից մինչև 23,2 %-ը, իսկ գիտական հրապարակումների ակտիվության աճի վկայումն այն էր, «Scopus»-ում գրանցված 5201 հոդվածները, ինչը 56 %-ով գերազանցում է նախորդ հինգ

²⁴ ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշման Հավելված N 1, <http://old.hesc.am/files/git-razmavarutyun-2017-20-17.08.17pdf.pdf>

տարիների ցուցանիշը և գերազանցել է համաշխարհային միջինը (32 %)՝²⁵: 2013–2015 թթ. տարեկան հրապարակումների քանակը եղել է 1 034, 1 066 և 953, իսկ միջազգային համահեղինակությամբ հոդվածների միջին մասնաբաժինը 2011–2015 թթ. կազմել է 57,5 %, աճելով 2006–2010 թթ.-ի 54 %-ից և հասնելով մինչև 63%՝ 2013–2015 թթ.-ին²⁶ :

Այս տվյալները ցույց են տալիս գիտության ոլորտում աշխատուժի կրճատում և երիտասարդների ներգրավման աճ՝ միաժամանակ արձանագրելով գիտական արտադրողականության ու միջազգային համագործակցության բարձրացում:

2020թ. հուլիսին մշակվեց Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, որտեղ իր տեղն է գտել մտավոր ներուժի ներգրավումը բարձր տեխնոլոգիական և ռազմական արդյունաբերության ոլորտներում: Այդ ռազմավարության գնահատմամբ Հայաստանը վարում էր մտավոր ներուժի հզորացմանն ուղղված պետական քաղաքականություն, ինչը միտված էր երկրի անվտանգային համակարգի դիմակայունության բարձրացմանը և երկրի առաջանցիկ զարգացմանը: Գիտական ներուժի բազմակողմանի ներգրավումը կենսագործունեության բոլոր՝ այդ թվում պաշտպանական ոլորտներում թույլ էր տվել ապահովել դրա արդյունավետ արդիականացման և զարգացման շարունակականությունը: Գիտակրթական համակարգի վերակառուցումը, այլ նպատակներից զատ, թույլ կտար նաև ստեղծել երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական հետազոտություններում գերազանցությունը խթանող, ինչպես նաև երկրի տնտեսության մրցունակության բարձրացմանը և անվտանգության ապահովմանը նպաստող համակարգ: Առանցքային համարվեց կրթության և գիտության ոլորտի ռազմավարական առաջնահերթությունների սահմանումը, դրանց օրգանական կապի ապահովումը պետական և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ: Բարձր տեխնոլոգիական ոլորտում պետական, ինչպես նաև մասնավոր և օտարերկրյա ներդրումների ներգրավման փոխշահավետ մեխանիզմների մշակմամբ պետությունը աջակցել էր բարձր տեխնոլոգիական հայկական արտադրանքի ստեղծմանը և իրացմանը Հայաստանում և արտերկրում²⁷: Հարկ է նշել, որ ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2015-2017 թվականների ռազմավարական ծրագիրը բացակայել է: Ներկայումս դեռևս չի ընդունվել նաև 2020 թվականից հետո ընկած ժամանակահատվածի (2020-2025 թթ.) գիտության զարգացման նոր ռազմավարական փաստաթուղթ: Հետևաբար, ոլորտը ներկայումս

²⁵ ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշման Հավելված N 1, <http://old.hesc.am/files/git-razmavarutyun-2017-20-17.08.17pdf.pdf>

²⁶ ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշման Հավելված N 1, <http://old.hesc.am/files/git-razmavarutyun-2017-20-17.08.17pdf.pdf>

²⁷ Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության Ռազմավարություն, դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում հուլիս 2020թ.

առաջնորդվում է 2021-2026 թթ. ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով: Այս ժամանակագրական ընդհատումները և ռազմավարական փաստաթղթերի հետևողականության բացակայությունը ծրագրերի հաստատման գործում վկայում են ոլորտի կառավարման և պլանավորման համակարգային բացերի մասին, ինչպես նաև հանգեցնում են ռազմավարական պլանավորման ցիկլի խաթարման: Ռազմավարական պլանավորման մեջ առկա այսպիսի ընդհատումները խոչընդոտում են գիտական համայնքի և միջազգային գործընկերների համար երկարաժամկետ կանխատեսելիության և ներդրումային վստահության ձևավորմանը, ինչպես նաև դժվարացնում են նախորդ ծրագրերի արդյունավետության գնահատումը:

2021 թվականի նոյեմբերի 18-ի ՀՀ կառավարության N 1902-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարական 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը: Ծրագիրը ներառում է ռազմավարական ուղղություններ և միջոցառումներ, որոնք նպատակ ունեն զարգացնել տնտեսությունը, բարելավել սոցիալական ոլորտը, ուժեղացնել պետական կառավարման արդյունավետությունը և ապահովել երկրի կայուն զարգացում նշված ժամկետում: Ծրագրի նպատակներն են գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումը, մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը, ոլորտում աշխատողների որակավորման բարձրացումը և երիտասարդ կադրերի ներգրավումը, պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև Հայաստանում գիտական աստիճանների և կոչումների շնորհման համակարգի արդյունավետ ապահովումը և գրագողության դեմ պայքարի արդյունավետության ուժեղացումը: Նպատակների իրագործման համար սահմանված են համապատասխան միջոցառումներ, ակնկալվող արդյունքներ, համակատարողներ, ժամկետներ, ֆինանսավորման աղբյուրներ և կանխատեսվող չափեր: Համաձայն ծրագրի բոլոր նպատակները չէ, որ պահանջում են ֆինանսավորում, կամ լրացուցիչ ֆինանսավորում: Օրինակ, գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումը և գրագողության դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չեն պահանջում: Իսկ գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգի ապահովումը ընդհանրապես ֆինանսավորում չեն պահանջում²⁸:

Գիտության քաղաքականության ընդունումը կախված է տնտեսական հզորությունից, հետազոտական ուժից և տարածաշրջանային քաղաքական ավանդույթներից, և այս քաղաքականությունները ծառայում են որպես ռազմավարական գործիքներ՝ գիտական հետազոտությունները տնտեսական

²⁸ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 (հավելվածը խմբ. 22.12.22 N 2117-Լ), Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր
<http://old.hesc.am/files/mijocarumner-2021-26-18.10.21.pdf>

աճի ծառայության դնելու համար: Գիտության զարգացման պետական ռազմավարությունը կարևոր է մի քանի պատճառներով, որոնք հիմնարար կերպով ձևավորում են ազգի նորարարության, տնտեսական աճի և հասարակության բարեկեցության կարողությունները:

Պետական գիտական ռազմավարության կարևորության հիմնական պատճառները

- Տեղական և ազգային մարտահրավերների լուծում. Պետական առաջնորդությամբ գիտական նախաձեռնությունները հնարավորություն են տալիս թիրախային արձագանքներ տալ տարածաշրջանին բնորոշ բնապահպանական, գյուղատնտեսական, առողջապահական և տնտեսական խնդիրներին: Պետական գիտնականներն ու հետազոտական ծրագրերը ապահովում են, որ քաղաքականությունը հիմնված լինի վերջին հետազոտությունների վրա և հարմարեցված լինի տեղական կարիքներին, որոնք կարող են լիովին չլուծվել ազգային կամ մասնավոր հատվածի ջանքերով:

- Երկարաժամկետ սոցիալական օգուտների պահպանում. Հետազոտական օրակարգեր սահմանելով և գիտության աջակցությունը պահպանելով նույնիսկ ազգային առաջնահերթությունների փոփոխության դեպքում, պետությունները նպաստում են շարունակականության ապահովմանը այն ոլորտներում, որոնք երկարաժամկետ օգուտներ են բերում հասարակությանը, ինչպիսիք են հանրային առողջապահությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և կրթությունը²⁹:

- Մասնավոր հատվածի կողմից թողնված բացերի լրացում. Մասնավոր շուկան հաճախ թերարժեք ներդրումներ է կատարում հիմնարար կամ հիմնարար հետազոտություններում, քանի որ գիտական հայտնագործությունների լայն օգուտները դժվար է յուրացնել որևէ մեկ կազմակերպության համար: Պետական միջամտությունը ապահովում է, որ էական հետազոտությունները, մասնավորապես բարձր սոցիալական եկամտաբերությամբ հիմնարար գիտությունը, բավարար կերպով ֆինանսավորվեն և իրականացվեն³⁰:

- Տնտեսական զարգացում և նորարարություն. Գիտության մեջ ռազմավարական ներդրումները օգնում են պետություններին գրավել բարձր տեխնոլոգիական արդյունաբերություններ, խթանել նորարարական կլաստերները և ստեղծել աշխատատեղեր: Համալսարանական հետազոտությունների և զարգացման մեջ ներդրումներ կատարող պետությունները սովորաբար ակնկալում են ներդրումներից եկամտաբերություն, ինչը ենթադրում է, որ այս քաղաքականությունը դիտվում է

²⁹ Amber M., and Bando J., “States as Laboratories for Science Policy Innovation.” Issues in Science and Technology (January 25, 2022), <https://issues.org/states-laboratories-science-policy-innovation-mace-bando/>

³⁰ Ben S. B., “Promoting Research and Development: the Government’s Role.” Issues in Science and Technology 27, no. 4 (Summer 2011), <https://issues.org/bernanke-research-development-government/>

որպես տնտեսական մրցունակությունը բարձրացնելու ռազմավարական ջանքեր³¹:

Եզրակացություններ: Գիտության զարգացման պետական ռազմավարությունը կարևոր է նրանով, ար այն դարձնում է հիմնավոր մեխանիզմ, որի միջոցով հետազոտությունն ու նորարարությունը կարող են արձագանքել ինչպես ներկայիս, այնպես էլ ապագա պահանջներին, խթանել տնտեսական աճը և բարելավել քաղաքացիների կյանքի որակը: Այն նաև նպաստում է պետությունների դիրքավորմանը՝ որպես համաշխարհային գիտական համայնքի նախաձեռնող առաջնորդներ, որոնք ունակ են հարմարվելու և ձևավորելու տեխնոլոգիական ու հասարակական փոփոխությունները:

Վերջին տարիներին իրականացված քայլերը՝ օրենսդրական բարեփոխումներից մինչև պետական ֆինանսավորման մեխանիզմների վերանայում, վկայում են այն մասին, որ գիտության զարգացումը դիտարկվում է որպես երկրի երկարաժամկետ կայունության, ինովացիոն աճի և մրցունակության կարևոր գործոն: Մինևույն ժամանակ ակնհայտ է, որ առկա են մի շարք կառուցվածքային և համակարգային խնդիրներ, որոնք պահանջում են շարունակական անդրադարձ և բարեփոխումներ՝ հիմնված ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային զարգացած երկրների փորձի վրա: Միայն հստակ մշակված և հետևողականորեն իրականացվող գիտության զարգացման պետական ռազմավարությունն է, որ կարող է ապահովել գիտատեխնիկական առաջընթաց, գիտական ներուժի արդյունավետ օգտագործում և նորարարական համակարգերի կայացում:

Առաջարկություններ: Հայաստանի Հանրապետության ռազմավարական ծրագրերը ցույց են տալիս ուղենիշային առաջընթաց, թեև առկա են նաև կառուցվածքային և ֆինանսական մարտահրավերներ: Անհրաժեշտ է շարունակել ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ վերանայելով գիտության ֆինանսավորման ձևերը, աջակցելով երիտասարդ գիտնականներին և խորացնելով միջազգային համագործակցությունը: Այս ամենից ելնելով, մշակվել են առաջարկություններ, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման պետական ռազմավարության կատարելագործմանը՝

1. Գիտության ոլորտում երկարաժամկետ և կայուն ֆինանսավորման ապահովում՝ ՀՆԱ-ի առնվազն 1%-ի չափով: Գիտության զգալիորեն ցածր ֆինանսավորումը խոչընդոտում է գիտության ինստիտուցիոնալ զարգացմանը և միջազգային մրցունակությանը:

2. Գիտության կառավարման և ֆինանսավորման մոդելների արդիականացում՝ մրցութային և արդյունքահեն մոտեցումների հիման վրա:

³¹ Feldman, M., & Lanahan, L. (2015). State science policy experiments. In A. B. Jaffe & B. F. Jones (Eds.), *The changing frontier: Rethinking science and innovation policy* (pp. 287–317). University of Chicago Press. <https://www.nber.org/chapters/c13046> էջ 314, 315

Ներկայիս համակարգում գերակշռում է բազային ֆինանսավորումը, որը չի խթանում մրցակցային զարգացում և նորարարություն:

3. Կրթության, գիտության և նորարարության համակարգերի ինտեգրման խորացում՝ համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների համագործակցության խթանում: Գիտահետազոտական ենթակառուցվածքների և կրթական համակարգի ներդաշնակեցումը թույլ կտա արագացնել գիտական արդյունքների կիրառումը և բարձրացնել կրթության որակը:

4. Հայազգիտության և հումանիտար գիտությունների ռազմավարական զարգացում՝ համազգային ինքնության և մշակութային անվտանգության ամրապնդման նպատակով: Հայազգիտությունը ներառվել է ռազմավարական գերակայությունների շարքում, սակայն այն պահանջում է հատուկ խթանում և միջազգային ճանաչելիություն՝ օրինակ՝ թվայնացում, թարգմանություն, միջազգային ծրագրերում ներգրավում:

5. Գիտության ռազմավարության և ազգային անվտանգության ռազմավարության համակարգային սինքրոնացում: Քանի, որ 2020 թ Ազգային անվտանգության ռազմավարությունը սկսել է գիտությունը դիտարկել որպես անվտանգային գործոն: Սա պետք է վերածել համապարփակ քաղաքականության՝ ներգրավելով պաշտպանության ոլորտը գիտահետազոտական նախաձեռնություններում:

Այսպիսով, գիտության զարգացման պետական ռազմավարությունը ոչ միայն ապահովում է գիտահետազոտական համակարգի կայունությունը, այլև ծառայում է որպես տնտեսական աճի, ազգային անվտանգության և մշակութային ինքնության ամրապնդման գործիք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության կառավարություն (2010, մայիսի 27). 2010 թ. մայիսի 27-ի N 20 նիստի արձանագրային որոշման հավելված: Վերցված՝ <http://old.hesc.am/files/10-razmavarutyun-27.05-33e4807a1e29afcf67b35e54b0c54caf.pdf>
2. Հայաստանի Հանրապետության կառավարություն (2011, հունիսի 17). 2011 թ. հունիսի 17-ի N 23 նիստի արձանագրային որոշման հավելված №1: Վերցված՝ <http://old.hesc.am/files/razmav-tsragir-git-2011-15.pdf>
3. Հայաստանի Հանրապետության կառավարություն (2017, օգոստոսի 17). 2017 թ. օգոստոսի 17-ի N 35 նիստի արձանագրային որոշման հավելված №1: Վերցված՝ <http://old.hesc.am/files/git-razmavarutyun-2017-20-17.08.17pdf.pdf>
4. Հայաստանի Հանրապետության կառավարություն (2021, նոյեմբերի 18). 2021 թ. նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման հավելված №1 (խմբագրված՝ 22.12.2022, № 2117-Լ): Վերցված՝ <http://old.hesc.am/files/mijocarumner-2021-26-18.10.21.pdf>
5. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն (2020, հուլիս). Դիմակայուն Հայաստան փոփոխվող

աշխարհում:

Վերցված՝ <https://www.mfa.am/filemanager/security%20and%20defense/AA-Razmavarutyun-Final.pdf>

6. Գևորգյան, Թ. (2009). Ռազմավարության դերը պետական կառավարման մեջ: ԿԱՆԹԵՂ. Գիտական հոդվածների ժողովածու, Հ1, էջ 166–169: Վերցված՝ <https://arar.sci.am/dlibra/publication/183063/edition/166290/content?ref=struct>
7. Կվինտ, Վ. Լ. (2023). Դեպի ռազմավարության տեսության ակունքները. Գեներալ Ժոմինիի տեսական աշխատանքի հրատարակման 200-ամյակը (թարգմ.՝ Ա. Պ. Հակոբյան). Սանկտ Պետերբուրգ: ԺՏՆՊԾՌԱ ԿՀԱԻ ՀՊԿ: 56 էջ, Վերցված՝ https://mse.msu.ru/wp-content/uploads/2023/10/Жомини_блок_арм..pdf
8. Bernanke, B. S. (2011). Promoting research and development: The government's role. *Issues in Science and Technology*, 27(4). Retrieved from <https://issues.org/bernanke-research-development-government/>
9. Carvalho, E. G. de, Ribeiro Guedes, S. N., & Gomes, R. (2021). Strategy: Notes for an economic and historical approach. *Nova Economia*, 31(2), 511–536. <https://doi.org/10.1590/0103-6351/6044>
10. Feldman, M., & Lanahan, L. (2015). State science policy experiments. In A. B. Jaffe & B. F. Jones (Eds.), *The Changing Frontier: Rethinking Science and Innovation Policy* (pp. 287–317). University of Chicago Press. <https://www.nber.org/chapters/c13046>
11. Freedman, L. (2017). The meaning of strategy. *Texas National Security Review*, 1(1), 90–105. Retrieved from <https://repositories.lib.utexas.edu/items/bd5fa240-f8ef-4749-903d-b8b42dbba112>
12. Gevorg Kesoyan, Ruzanna Shushanyan, Maria Ohanyan, Aleksan Shahkhatuni, Mariam Yeghikyan, Viktor Blaginin, Boosting science through state support: Armenian state grants as a driver of scientific and international advancement, *Journal of Informetrics*, Volume 19, Issue 3, 2025, 101704, ISSN 1751-1577, <https://doi.org/10.1016/j.joi.2025.101704>
13. Inhaber, H. (1977). Scientists and economic growth. *Social Studies of Science*, 7(4), 517–524. <https://doi.org/10.1177/030631277700700415>
14. Lenchuk, E. (2022). Science and technology development as a strategic national priority of Russia. *Economic Revival of Russia*. <https://doi.org/10.37930/1990-9780-2022-1-71-58-65>,
15. Likhota, O. (2025). Evolution Of State Regulation Of Innovation In The USA. *Intellect XXI*. <https://doi.org/10.32782/2415-8801/2025-2.1>
16. Mace, A., & Bando, J. (2022). States as laboratories for science policy innovation. *Issues in Science and Technology*. Retrieved from <https://issues.org/states-laboratories-science-policy-innovation-mace-bando/>

17. Modreanu, A., Andrisan, G. N., & Sarbu, M.-A. (2021). Strategy: An overview. "Ovidius" University Annals, Economic Sciences Series, XXI(2), 836–841. <https://stec.univ-ovidius.ro/html/anale/RO/2021-2/Section%204/37.pdf>
18. Panikar, G., & Morozov, V. (2025). The Role Of State Economic Policy In The Implementation Of New Technologies And Innovations: The Case Of Public-Private Partnerships In Eu Countries. Actual Problems of International Relations. <https://doi.org/10.17721/apmv.2025.162.1.83-100>,
19. Vilchis Flores, J. C., & Merritt Tapia, H. (2024). El papel del Estado en el desarrollo científico y tecnológico de México. Problemas del Desarrollo. Revista Latinoamericana de Economía, 55 (219), 85–112. <https://doi.org/10.22201/ieec.20078951e.2024.219.70211>
20. Wagner, C. (2024). Science and the nation-state: What China's experience reveals about the role of policy in science. Science and Public Policy. <https://doi.org/10.1093/scipol/scae034>,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համառոտագիր

Ռազմավարության ուսումնասիրությունը պատմության ընթացքում ձևավորվել է որպես բազմաբնույթ մոտեցումներով լի ընկալում, որի առանցքում ընկած է տեսության և պրակտիկայի փոխհարաբերության խնդիրը: Ժամանակակից ընկալմամբ՝ պետական ռազմավարությունը համարվում է կառավարման բարձրագույն մակարդակ, որը նախատեսված է ռեսուրսների օպտիմալ բաշխման, ազգային նպատակների իրագործման և երկարաժամկետ անորոշություններին դիմակայելու համար: Մասնավորապես, գիտության զարգացման պետական ռազմավարությունը դիտարկվում է որպես առանցքային գործիք՝ ազգային մրցունակության, տեխնոլոգիական ինքնիշխանության և տնտեսական աճի ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի ռազմավարական պլանավորումը դարձել է կարևորագույն գործիք՝ հետխորհրդային անցումային փուլում համակարգի վերակառուցման, ֆինանսավորման բարեփոխման, կադրային «ծերացման» խնդրի լուծման և միջազգային ինտեգրման համար: Թեև 2011-2020 թվականներին մշակվել և իրականացվել են մի շարք ռազմավարական ծրագրեր, որոնք նպաստել են գիտական արտադրողականության աճին և երիտասարդ մասնագետների ներգրավմանը, այդուհանդերձ, առկա են ռազմավարական պլանավորման ցիկլի լուրջ ընդհատումներ (մասնավորապես 2015-2017թթ. և 2020 թվականից հետո ընկած ժամանակահատվածներում):

Հետազոտության հիմնական մասը կազմել է Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացմանն ուղղված առանցքային պետական փաստաթղթերի՝ ռազմավարությունների, ռազմավարական ծրագրերի և կառավարության որոշումների խորքային ուսումնասիրությունը: Բովանդակային վերլուծության միջոցով բացահայտվել են գիտական քաղաքականության հիմնական ուղղությունները, թիրախային ցուցանիշները և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների դինամիկան: Իրականացվել է Ռուսաստանի, Չինաստանի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի գիտության ռազմավարական առաջնահերթությունների, ինչպես նաև ՀՀ գիտության զարգացման 2011-2015 և 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրերի նպատակների և թիրախների համադրումներ:

Հայաստանում գիտության պետական ռազմավարությունը, որպես կայուն զարգացման գործոն՝ դեռևս չունի բավարար ինստիտուցիոնալ հենարան: Գոյություն ունեցող ծրագրերը մասնակի են, համակարգայնությունը՝ թույլ: Առկա է ինչպես մարդկային ռեսուրսի, այնպես էլ ֆինանսական ապահովման պակաս: Այսպիսով, կարելի է ասել, որ անհրաժեշտ է ռազմավարական կառավարումն ամրապնդել՝ ներդնելով երկարաժամկետ և առավել թիրախային ծրագրեր, միջազգային համագործակցություն և կապ տնտեսության իրական հատվածի հետ: Անհրաժեշտ են կիրառական քայլեր գիտության զարգացման համար՝ ներառյալ կառավարման մոդելների բարելավում և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներմուծում:

Բանալի բառեր. ռազմավարություն, պլանավորում, պետական ծրագրեր, գիտություն, քաղաքականություն:

ТРАЕКТОРИЯ ГОСУДАРСТВЕННОЙ СТРАТЕГИИ РАЗВИТИЯ НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АНУШ АРУТЮНЯН

Аннотация

Изучение стратегии на протяжении истории формировалось как восприятие, наполненное многообразными подходами, в основе которого лежит проблема взаимосвязи теории и практики. В современном понимании государственная стратегия считается высшим уровнем управления, предназначенным для оптимального распределения ресурсов, реализации национальных целей и противостояния долгосрочным неопределенностям. В частности, государственная стратегия развития науки рассматривается как ключевой инструмент для обеспечения национальной конкурентоспособности, технологического суверенитета и экономического роста.

Стратегическое планирование научного сектора Республики Армения стало важнейшим инструментом реструктуризации системы, реформирования финансирования, решения проблемы «старения» кадров и международной интеграции в постсоветский переходный период. Несмотря на разработку и реализацию ряда стратегических программ в 2011-2020 годах, способствовавших росту научной продуктивности и привлечению молодых специалистов, в цикле стратегического планирования по-прежнему наблюдаются серьезные сбои (в частности, в периоды 2015–2017 гг. и после 2020 года).

Основная часть исследования представляла собой углубленное изучение ключевых государственных документов, направленных на развитие научного сектора Республики Армения: стратегий, стратегических программ и решений правительства. Путем контент-анализа были выявлены основные направления научной политики, целевые показатели и динамика их изменений во времени. Проведено сравнение стратегических приоритетов науки в России, Китае, ЕС и США, а также целей и задач стратегических программ развития науки в Республике Армения на 2011-2015 и 2017-2020 годы.

Государственная стратегия развития науки в Армении, как фактор устойчивого развития, до сих пор не имеет достаточной институциональной поддержки. Существующие программы носят фрагментарный, системный и слабый характер. Наблюдается нехватка как кадров, так и финансовой поддержки. Таким образом, можно сказать, что необходимо укрепить стратегическое управление путем внедрения долгосрочных и более целенаправленных программ, международного сотрудничества и связей с реальным сектором экономики. Для развития науки необходимы практические шаги, включая совершенствование моделей управления и внедрение новых механизмов финансирования.

Ключевые слова: стратегия, планирование, государственные программы, наука, политика.

THE TRAJECTORY OF THE STATE STRATEGY FOR SCIENCE DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

ANUSH HARUTYUNYAN

Abstract

The study of strategies throughout history has evolved as a multifaceted field, centered on the complex relationship between theory and practice. In contemporary scholarship, state strategy is regarded as the highest level of governance, aimed at the optimal allocation of resources, the achievement of national objectives, and the management of long-term uncertainty. Within this framework, a state strategy for the

development of science is viewed as a critical instrument for ensuring national competitiveness, technological sovereignty, and sustained economic growth.

In Armenia, strategic planning of scientific sector has played a crucial role in restructuring and developing the national research system during the post-Soviet transition period. This process has encompassed reforms in funding mechanisms, efforts to address the aging of scientific personnel, and the integration of Armenian science into international research networks. Although several strategic programs were developed and implemented between 2011 and 2020 (contributing to increased scientific productivity and greater involvement of young researchers) significant disruptions in the strategic planning cycle remain evident, particularly during 2015-2017 and in the period following 2020.

The core of this study involves an in-depth analysis of key state policy documents of Armenia, including national strategies, strategic programs, and government decisions promoting scientific sector. Using content analysis, the study identifies the main directions of science policy, key target indicators, and their evolution over time. Comparative analysis is conducted between Armenia's strategic priorities and those of Russia, China, the European Union, and the United States, as well as between Armenia's Science Development Strategic Programs for 2011–2015 and 2017–2020.

The findings indicate that Armenia's state science strategy, as a driver of sustainable development, remains constrained by insufficient institutional support. Existing programs are fragmented and weakly coordinated, and both human and financial resources are limited. Strengthening strategic governance therefore requires the introduction of long-term, goal-oriented programs, expanded international cooperation, and closer integration between science and the real sector of the economy. Practical measures are also needed to modernize management models and introduce innovative funding mechanisms.

Keywords: strategy, planning, state programs, science, policy